1659.

Գրեցաւ գիրքս որ կոչի Ա՛ռ որս, ասացեալ Սրբոյն Գրիգորի Աստուածաբանի, ի լաւ և յընտիր օրինակէ, ի վայելումն և յիշատակ բարեմիտ և ուսումնասէր բանասիրի Տեառն Յոհաննէս հեզահոգի ընտրեալ քահանայի, որ մականուամբ կոչի Քարմատանենց... Գրեցաւ սա ի Թուին Հայոց քառիցս յիսնակի և Գ. յոբելինի, այլ և եօթն աւելորդի, օգոստ. 12, ի տիրախնամ և աստուածապահ մայրաքաղաքս Լէվ կոչեցեալ, ի դուռն Նշման Ս. Աստուածածնի, ձեռամբ մեղսամած և փծուն գրչի Սիմէոն դպրի Ջամոսցւոյ... [Ա՛ռ Մխիթար. Վիենայ]:

1662.

Պատճառին ամենայնի և գոյացուցչին զմարդն՝ ըստ իւրում պատկերին, և զնոյն վերստին նորոգողի ընդ ինքեան ի մի՝ ըստ անսահման սահմանի, անճառ և անհաս խառնմամբ նոր իմն եղանակի, յաւէտամառոյց գոհութիւն, մշտնջենաւոր փառաւորութիւն տացի և վերառաքեալ հատուսցի. որ կարողացոյց զտկարս և զօրացոյց զ՚ի բարեաց վերջնոտնեալս զՍտեփանոս Իլովացի, հուսկ յետինս ի բանասիրաց, գծագրել մատամբ իմով զերանապարփակ և զամենատարփակ մատեանս, զչորեքծագեան տիեզերաց համաքարոզ տառս, որ ընդ կենսակիր և նոթճալուր ներգործութեան իւրում՝ Աւետարան մակագրի. և այլն: Սկզբնաւորեալ աւարտեցի զհոգեկեցոյց տառս աքանչելի՝ ի ստուգագոյն օրինակաց նախնեաց ցայս վայր հասելոց. իսկ ոսկէնկարէնս իմն տեսակաւ զարդարեալ եւու գեղապաճոյճ արարեալ ի գոյնս վայելուչս, եռանգագոյն որակօք երփնազարդեալ ըստ արհեստից յօրինմամբ. և բոլորապէս ի կատարումն ածի, ի գովութիւն ամենակատար Էին Յիսուսի Քրիստոսի: Բայց գրեցաւ ըստ ամի մարմնաւորութեան Բանին կենարարի՝ հազարերորդի վեցհարիւրորդի վաթսներորդի և մու միակի, և ըստ հայկայինս շրջանի Ռդի Ճդի Թուոյ, ըստ տասանց առ նոյն յարողի, ի գահ իջման Միածնի ի Վաղարշապատ քաղաքի, ի հայրապետութեան Տեառն Յակոբայ սրբազանի: Ձեռնարկեալ էր յառաջագոյն զայս տուփ մատենիս գրել Մովսէսի վարդապետի սիրելոյ իմոյ և ուսուցանողի զայս արուեստ. յորմէ սակաւուք ինչ գտեալ՝ նիւթ և պատճառ եղեւ իմոյս բովանդակութեան: Վասն որոյ յիշեսցին ի վայելողացդ և ընթերցողացդ բարեսէր կամօք նախկին առիթք սորին տառի, և Ստեփանոս բանասէր բազում հոգացողութեամբ գրոյ և ստացող պատուականս մարգարտի, հանդերձ ծնողօք և համօրէն ընտանեօք: Արդ զայս փափագելի կենսունակ սուրբ կտակս ընծայեցի ի դուռն Ս. Աստուածածնին եկեղեցւոյ Իլովայ մայրաքաղաքին, ի պայծառութիւն հարսին Քրիստոսի և ի լուսաւորութիւն մանկանց եկեղեցւոյ, և ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրն՝ Պր. Վարդանին և մօրն՝ Կատարինեայ, և եղբարցն և քերցն, և այլ ամենայն զարմից իմոց, կենդանեաց և ննջեցելոց: Վասն որոյ, մի ոք համարձակեսցի զայս հանել:...